



ՍՈՒՐԵՆ Ե. ՔՈԼԱՆՁՅԱՆ

ԱՐՏԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՄԲԱՏՅԱՆՑԸ ԵՎ ՆՐԱ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՏՊԱՐԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԳՐԱԾ ԵՐԿԸ

Վերջերս Մայր Աթոռի տպարանից, որպես «Էջմիածին» ամսագիր առանձնատիպ, լույս տեսավ Արտակ եպս. Սմբատյանցի «Սուրբ Էջմիածնի միաբանության գրական-կրթական գործունեությունը և Մայր Աթոռի տպարանը» աշխատությունը:

Հրատարակված սույն արժեքավոր աշխատության հեղինակ, Մայր Աթոռի միաբան Արտակ եպիսկոպոս Սմբատյանցի (Տավուշիցի) բովանդակ կյանքը եղել է հայ եկեղեցուն և հայ ժողովրդին մինչև վերջ առանց մնացորդի նվիրվելու բացառիկ մի օրինակ: Իր կյանքի ընթացքում որ որ էլ նա գործել է, արժանի կերպով վայելել է հայ հասարակության անվերապահ սերն ու համակրանքը և համարվել մեր շնորհաշատ և եռակուն հոգևոր-հասարակական գործիչներից մենք: Պեսք է աշել, որ ցարդ տպագիր գրականության մեջ շատ քիչ բան է հայտնի Արտակ եպիսկոպոս Սմբատյանցի մասին, ուստի մեր խոսքը ևս նվիրված նրա կյանքին ու գործունեությանը շատ թերի էր լինելու, եթե երկար որոնումներից հետո վերջերս մեզ բախտ չվիճակվեր Երևանի Մաշտոցյան Մատենադարանի դիվանային բաժնում գտնելու Արտակ եպիսկ. Սմբատյանցի իսկ ձեռքով ամենայն բարեխունույթամբ կազմված նրա ծառայությունների

մատյանը, հանդերձ մի քանի տասնյակ անձնական փաստաթղթերով¹:

Արտակ Եփիրեմյանց, Հարությունյանց-Սմբատյանցի աշխարհական անունը եղել է Ղազար: Նա ծնվել է 1876 թ. մարտի 19-ին Տավուշ (այժմ Թովով) գյուղում: Նրա հոր անունը է եղել Եփիրեմ Տեր-Հովակիմյան-Հարությունյանց (նոյն և Սմբատյանց), իսկ մոր՝ Զավահիր Հերապետյան: Փոքրիկ Ղազարը իր նախնական ուսումն իր ծննդավայրում մասնավոր անհատների և հոր մոտ ստանալուց հետո, 1887—1894 թթ. սովորում և ավարտում է հաջողությամբ Թիֆլիսի Ներսիսյան հոգևոր դպրոցը և ապա 1894—1897 թթ. դարձյալ հաջողությամբ ավարտում է նաև Էջմիածնի Գեղրգյան ճեմարանի լսարանական ընթացքը: Դեռևս 1895 թ. Խրիմյան Հայոիկի կոնդակով նա իր վեց ընկերների հետ ընդունվում է Մայր Աթոռի միաբանների շարքում և ստանում ուրար-

¹ Մաշտոցյան Մատենադարանի դիվան, Գարեգին արքեպիսկ. Հովսեփյանցի անձնական արխիվ, թղթապանակ № 94, վավերագիր № 8, Արտակ եպիսկոպոսի «Ցուցակ ծառայությանց»-ը և այլ անձնական գործեր, իսկական փակերագրեր և պատճեններ, 57 կտոր (90 թերթ):



S. Արտակ Խափսկոպոս Սմբատյանց

կրելու իրավունք, իսկ 1896 թ. ս. Գայանեի վաճառքու Սուրբիս արքեպի. Պարզաբն ձեռքով ձեռնադրվում է սարկավագ: Սակայն ուսման ծարավի երիտասարդը ցանկանում է էլ ավելի կատարելագործել իր գիտելիքները և 1899 թ. հասնում է մինչև Դորպատի համբավագործությունը, որ երեք տարի իրեն ազատ ունենալիք հնատում է դասերին: Աղբեմ 1902 թ. նոյեմբերի 24-ին Հունիկ արքեպի. Սովորականից ձեռնադրվում է արելա, ստանալով՝ Արտակ հոգևոր անունը, իսկ 1908 թ. հոկտ.-ի 24-ին ձեռնադրվում է վարդապետ՝ Ալեքսեյ Եպիփանիկ. Հովակիմյանի ձեռքով: Ավելի ոչ, 1920 թ. սեպտ.-ի 28-ին, Զայնեն Եպիփառությաց աստանում է ծարդագոյն վարդապետի աստիճան, իսկ 1922 թ. հոկտ.-ի 30/նոյ. 12-ին Գեղրգ Ե Ամենայն Հայոց կաթողիկոսից ձեռնադրվում է եպիփառության:

Արտակ Եպիփանիկ. Սմբատյանցի գործունեության կարևոր մեջ մասը անմիշականորեն կապված է մեռու Մայր Աթոռի առօրյա կյանքի հետ: Այն մասում, որ թույլ օյջակ է նկատվել կամ մասամբ կադացել է գործը, միշտ էլ դիմվել է Սմբատյանցի ձեռնիշաստրանը: Այդ է պատճառը, որ նա հաճախ ընդմիջումներով հրավիրվել է ստանձնելու իր հայսկինում վարած այս կամ այն պաշտոնը: Այդպես է, որ նա ընդմիջումներով 1903—1904, 1910, 1913—1914, 1920 և 1932 թթ. հրավիրվել է վարեկո Մայր Աթոռի գաւանապետի պաշտոնը, 1898—1899 և 1906—1907 թթ. Եղել է վաճական կառավարության անդամ: Նա տարբեր ժամանակներում եղել է նաև Մայր Աթոռի հյուրընկալ (1903—4), Գեղրգակ Շնմարանի ուսուցիչ (1898—99), ուսումնական հանձնաժողովի անդամ (1904), Խրիմյան և Խզմիրյան կաթողիկոսների օրոր նշանակվել է ս. մյունիքի օրինութամ կարգադրի հանձնաժողովի անդամ (1903, 1910), Մայր տաճարի վերանորության հանձնաժողովի անդամ (1910—11), վարեկ է պատասխանառու պաշտոններ Մայր Աթոռի տպարանում և այլն:

Նույնքան թելմնավոր է եղել Արտակ Եպիփառ-ի գործունեությունը զանազան թեմերում: Նա երկու անգամ (1904—1906 և 1910—1913) հրավիրվել է իրեն գործակալ Նոր Բայազելեղում (այժմ Կամո) և Դարաշչակում (այժմ Շաղկաձոր): Այստեղ նրա գործադրած բացառիկ շանքերը մեծապէս գնահատվել են Խրիմյան Հայրիկի կողմից, որը 1905 թվականի հատուկ կոնհակով² նրան շնորհել է վարդապետական լանջախաչ կրելու իրավունք, իսկ տեղի ժողո-

վորդը բազմաթիվ ստորագրություններով կրկին նրան նոյն պաշտոնին է հրավիրել: Նա նշանակվել է նաև Նոր Նախարարիական և Բանարարիական կոնսիստորիայի անդամ (1907—1910), իբրև լիազոր քննիչ աշխատել է Կարսի հոգևոր կառավարության և շրջանի գուղերի եկեղեցիներու (1912), Ծամալու կոնսիստորիայից նշանակվել է Բարի հայկական եկեղեցիների գործակալ (1912—1913): Ասպա Արտակ վարդապետին տեսնում ենք 6 տարի շարունակ իբրև Ալեքսանդրապոլի (այժմ Լեռնասկալ) վիճակի փոխանորդ (1914—1920): Այստեղ նա ոչ միայն կարողանում է հայտնաբերել տեղի ունեցող մի շարք չարաշահություններ և զեղություններ, այլև շնորհիվ իր ձեռք առած սիցոցների Ալեքսանդրապոլի շրջանու բացվում են 33 նոր դպրոցներ: Այս առթիվ Ամենայն Հայոց կաթողիկոս Գեղրգ Ե-ը իր օրինությունն ու գոհունակությունն է հայտնում³:

Նա 1914—1920 թթ. նշանակվում է նաև Հաղինի եղեղայան ծխական դպրոցի նախագահ և իր կարևոր նպատակ է բերու դպրոցի հասույթների մեծացմանը և շինարարության կազմակերպմանը:

Գեղրգ Ե կաթողիկոսը իր կոնհակույթ Արտակ վլրդ Սմբատյանցի նշանակում է Ալեքսանդրապոլի «Եղբարյական օգնության» կոմիտեի նախագահ (1915—1916): Նրա օրոք է, որ ընդունվել և խնամվել են արևմբրտահայ 50 հնագար զայթականներ, նրանց համար ստեղծվել են 16 հանքակացարան, բացվել նախապատրաստական 11 դպրոցներ, հիմանդանոց և այլն և այլն: 1920 թ. հոկտ.-ի 11-ին Ալեքսանդրապոլում կայացած անդրանիկ թեմական պանդամակուրական ժողովը Արտակ ծ. վ. Սմբատյանցին միաձայն ընտրեց Շիրակի նորահասուած թեմի առաջնորդ: 1922—1927 թթ. նա հաստատվել է իբրև Սյունիաց թեմի առաջնորդ և Տաթևի վանքի առաջնորդ-վանահայր: Նա կարճ ժամանակում հնարավորություն ունեցավ վերականգնելու Տաթևի կործանված տնտեսությունը և ձեռնամուխ լինելու վերանորոգության աշխատանքներին: Նրա շանքերը անվերապահ գնահատանքի արժանացան բազմաթիվ հայտնի այցելուների, այդ թվում նաև Հայաստանի այն ժամանակվա վարդապետ Լուկաշինի կողմից, որը նորանոր հնարավորություններ ստեղծեց վանքի տնտեսության վերականգնման համար:

³ «Արարատ», Վաղարշապատ, 1917, էջ 274:

⁴ Սահսուցյան Մատենադարանի դիվան, Գարեգին արքապիտիկ, Հովսեփյանցի արխիմիկ, թոյթ. № 94, վալ. № 8, «Յուցակ ծառայության...», էջ 25ա—բ:

⁵ Անդ, էջ 28ա:

Այս շրջանում է, որ Սովետական Հայաստանի Հնությունների պահպանության կոմիտեն իր կողմից 1925—1926 թվ. Արտակ Եպիսկոպոսիկ.-ին հատուկ մանդատով հշանակում է լիազոր-ներկայացուցիչ Սյունյաց թեմում գտնված վաճերի և բոլոր տեսակի հնությունների վրա: Հիշյալ փաստաթղթի միջնորդը, որը ստորագրված էր կոմիտեի նախագահ Ա. Թամանյանի, գիտնական քարտուղար Աշխարհիկ Քաղաքարի և գործակար Արքահամբանի կողմից, կոմիտեն «Խնդրում էր Խորհրդային բոլոր հաստառություններին ցուց տալ Արտակ Եպիսկոպոսին լիակատար աշակեցություն»⁶: Իրեն վստահված այս պաշտոնի ընթացքում էր, որ Արտակ Եպիսկոպոսը պատրաստեց Տաթևի վաճերի փաստական պատմությունը, որը արձանագրություններով և գավազանագրով հանդերձ, ինչպես նաև Սյունիքի վեց այլ հայկական միջնադարյան հուշարձանների մասին իր ուշագրավ գեկուցագիրը, որ բացի նրանց պատմական անցյալը ուրվագելուց անհրաժեշտ առաջարկությունները էր բերում նրանց վերականգնման հետ կապված աշխատանքների մասին: Այս գեկուցագիրի մի օրինակը նաև ներկայացրեց Հայաստանի Հնությունների պահպանության կոմիտեին, իսկ մյուսը հանձնեց Ամենայն Հայոց կաթողիկոս Գեորգ Ե-ին, որը մեծապես գնահատելով Արտակ Եպիսկոպոսի կատարած գործը իր իսկ ձեռքով գեկուցագրի վրա մակագրեց հետևյալը. «Օրինյալ լինեն Արտակ սրբազն, որքան հնարավոր է աշխատիլ ազգային հնությունները և տաճարները պահելու և ըստ կարելվոյն նորոգելու»⁷:

1927 թ. փետրվարի 20-ին Լենինականում Շիրակի թեմի թեմական պատգամավորական ժողովը Արտակ Եպիսկոպոսի երկրորդ անգամ միաձայն ընտրեց Շիրակի թեմի առաջնորդ և երրորդ անգամ հրավիրեց պաշտոնի: 1929 թ. դեկտ.-ի 18-ին Թիֆլիսի թեմական պատգամավորական

⁶ Անդ, վավերագրի բնագիրը № 55, էջ 82ա—բ: Այն գրված է 1926 թ. փետրվարի 20-ին և կրում է 203 համարը:

⁷ Մաշտոցյան Մատենադարանի դիվան, արխիվ գանձան Բնույնակների, թղթ. № 67, վագ. № 151, էջ 33ա:

ժողովը միաձայն նրան ընտրեց Վրաստակի հայոց թեմի առաջնորդ: Գեորգ Ե-ի մահից հետո նոր կաթողիկոսի ընտրության առթիվ հշանակվեց Արարատյան թեմի և ապա նաև Զանգեզուրի (Սյունյաց թեմ) հայրապետական պատգամավորների ընտրության դեկանը և լիազոր (1932 թ. հունիսի 22 և հուլիսի 17): 1932 թ. նոյեմբերի 13-ին Էջմիածնում գործարված համագգային եկեղեցական ժողովը Արտակ Եպիսկոպոսի նոգելու խորհրդի անդամ, ինչ 1933 թ. հունվարի 19-ին նշանակվեց Գերագույն հոգևոր խորհրդի դիվանի դիվանապետ: 1935 թվականից նա դառնում է Արարատյան թեմում Ամենայն Հայոց կաթողիկոսի ներկայացուցիչ: Այդ պաշտոնում էլ անժամանակ կերպով մահանում է 1937 թ.:

* * *

Ինչպես Մայր Աթոռում, այնպէս էլ թեմերում հակառակ իր բոլորած այնքան բազմաբեղուն գործունեության, Արտակ Եպիսկոպոսի Սիրատյանցը իրեն ժամանակ էր ստեղծուի գրադեկուն նաև գրական, պատմա-բանափական և թարգմանական գործերով: Նրա գրչին են պատկանում հրատարակված մի շարք գրքեր: Ծորչ մեկ և կես տասնամյակ նա եղել է մնայուն աշխատակիցը Մայր Աթոռի պաշտոնաթերթ «Արարատ» ամսագրին, որ լուս է ընծալել ինքնուրույն և թարգմանական բազմաթիվ հոդվածներ, հոգեւոր քարոզներ, բարոյական հոդվածներ: Աշխատակցել է նաև Թիֆլիսի «Լուսա» պարբերականին և Հայեապու լուս տեսնող Արտավազդ վարդ. Սյունեյանի «Տաթև» տարեգրին:

Ստորև բերում ենք Արտակ Եպիսկոպոսի սպագրված աշխատությունների մատենագիտությունը, կազմված իր իսկ ձեռքով, որը անտիկ մնացած «Գրացուցակ Էջմիածնի տպարանից լուս տեսած գրքերի» գործից: Ինչ վերաբերում է նրա անտիկ գործերին, դրանք գտնել ենք Մաշտոցյան Մատենադարանի դիվանային բաժնի զանազան գործերում:

⁸ Օրացուց 1935 թվականին Քրիստոփ ...Էջմիածնի, 1935 և 1936, էջ 261:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՏԱԿ ԵՊԻԿԵՐԻ

Ա.—Գրքեր

1 Հոյն արևելքի հին եկեղեցական աստվածաբանական գիտությունը լուր ծաղկման շրջանում (4—5-րդ դդ.), պրոֆ. Ն. Սագարյանի, թարգմանություն ուսուելունց, Վաղարշապատ, տպարան Մայր Աթոռ և Էջմիածնի, 1910 թ., 77 էջ (նախագիր

նրատարակված «Արարատ», Վաղարշապատ, 1910 թ., էջ 539—548, 627—636, 719—726, 846—857, 946—957, 1061—1068, 1141—1158):

2 Ամենագեղեցիկ բանը կանոնական գործարակություն անգիտերենի գերմաներեն փոխադրությունից, անդ, 1911 (56 էջ), նախագիր

- հրատարակված «Արարատ», 1910 թ., էջ 685—690, 808—815, 915—927, 1019—1028):
- 3 Եկեղեցու պատմությունը Տիեզերական ժողովների շրջանում, պրոֆ. Վ. Վ. Բողոսովի, թարգմանություն ռուսերենից, անդ, 1914, 201 էջ (նախապես հրատարակված «Արարատ», 1911 թ., հավելված № 4, էջ 1—6, 17—82, 83—48, 49—64, 65—80, 81—96, 97—112, 1912 թ. հավելված № 4, էջ 113—128):
- 4 Համառու պատմություն Տարեկ Վանքի, «Տաթևա տարեկից», 1980, Հայեա, էջ 278—351 (նաև առաջնային):
- 5 Ս. Էջմիածնի միարանության գրական-կրթական գործունեությունը և Մայր Աթոռի տպարանը, հրատարակության պատրաստումը, ներածությունը, ծանոթագրությունները և հավելվածը՝ Սուրբ Քոյսչամի և Արքուն Հատիտյանի: Մայր Աթոռի տպարան, 1978, 184 էջ): Բնագիրը նախապես հրատարակվել է «Էջմիածն», 1972, № 4—12):
- Բ.—Հոդվածներ**
- 6 Փարիսեցին և մաքսավորը (թարգմ.) «Արարատ», 1904, է—Ը:
- 7 Ս. Հովհաննես Մկրտիչ (թարգ.), անդ, Ժ:
- 8 Քրիստոնեությունը և բողդայականությունը արևոտություն (թարգմ.), անդ, Բ—Գ:
- 9 Ամենամեծ տնտեսությունը, (թարգմ.), անդ, 1905, Բ:
- 10 Վերածնություն (թարգմ. գերմաներենից), անդ, Ժ—ԺԱ:
- 11 Եկեղեցական զգաստների ծագման ժամանակի մասին (թարգմ.), անդ, 1905, Զ, է, Ը, ԺԱ:
- 12 Կաթոլիկ եկեղեցին Ֆրանսիայում (թարգմ.), անդ, 1907, Դ:
- 13 Կ. Պ. Պորդեմանոցն (թարգ.), անդ, 1907, ԺԲ:
- 14 Բելգուով թժկւ, Նեկրատով և Լորիս Մելիքով (պատմեր անցյալի, թարգմ.), անդ, 1908, Դ:
- 15 Պետրով Գր., Հիսուս Քրիստոս (ռուս. թարգ.), անդ, 1909, ԺԲ:
- 16 Փրկչի ծնունդը (գերմ. թարգմ.), անդ, 1910, Ս:
- 17 Ամուսնություն (ռուս. թարգմ.), անդ, Բ:
- 18 Լոռա քարոզը (ռուս. թարգմ.), անդ, Գ:
- 19 Հալլի գիտակորի մետ զուգահիպած համաշխարհային դեպքերը (թարգմ.), անդ, Գ—Դ:
- 20 Նաուման Ֆ., Հարության հավատը (թարգմ.), անդ, Դ:
- 21 Նաուման Ֆ., Համբարձման պատմությունը (թարգմ.), անդ, Ե:
- 22 Պրոֆ. Ն. Մատի թուղթը Անիում Բնագիտական ինստիտուտ հիմնելու համար (թարգմ.), անդ, Ե:
- 23 Նաուման Ֆ., Ես եմ կյանք (թարգմ.), անդ, Զ:
- 24 Բայց ևս ասեմ Ձեզ, սիրեցէք զեշմամիս ձեր..., անդ, Է:
- 25 Փառք ի քարձուն Սատուծոյ (գերմ. թարգմ.), անդ, 1911, Ս:
- 26 Ի սկզբանի էր բանն... (գերմ. թարգմ.), անդ, Բ:
- 27 Քրիստոս հարցավ ի մեռնեց, անդ, Դ:
- 28 Գողգոթապի խաչի հաղթանակը, անդ, Ե:

- 29 «Լուսաւորեաց» լուսաւորեաց Երուսաղեմ..., (թարգմ.), անդ, Է:
- 30 Մանուկ Հիսուսը տաճարում (փոխադր. գերմ.-ից), անդ, Ժ:
- 31 Պետրոսի ուրացությունը (փոխադր. գերմ.-ից), անդ, ԺԱ:
- 32 Հիլլել (Մեկնարանություն Աստվածաշնչի դրվագներից), անդ, 1912, Է, Ը:
- 33 Աշխատելու արվեստը (փոխադր. գերմ.-ից), «Հումա», Թիֆլիս, 1908, № 3, 4, 5:
- 34 Հիսուս Քրիստոսի եւթյունը (փոխադր. գերմ.-ից), «Արարատ», 1918, ԺԱ:
- 35 Նաուման Ֆ., Մելքը և մամ (թարգմ.), անդ, 1918, ԺԲ:
- 36 Նաուման Ֆ., Շննդյան երեկո (փոխադր.), անդ, 1914, Ս:
- 37 Նաուման Ֆ., Աստուծոյ շնորհյալը (փոխադր.), անդ:
- 38 Համառու տեղեկագիր Ալեքսանդրապոլի վիճակի եկեղեցական-ծիսական դպրոցների 1918/17 ուստարվածքը, անդ, 1917, Ը:

Գ.—Անտիպ գործեր

- 39 Գրացուցակ Էջմիածնի տպարանից լուս տեսած գործերի, ձեռագիր 267 էջ⁹:
- 40 Համառու տեղագրություն և պատմություն Սյունյաց թեմի Զշանավոր վեց վանքերի, իրենց արձանագրություններով և պատկերներով (ընդգրկում է Հարանց անապատի, Տարեկ մեծ անապատի, Շինուարայի կուսանաց անապատի, Միջեռնավանդի, Որոտն վանքի և Ղարաբիլիսայի և Հովհաննես եկեղեցու մասին): Ներկայացված է Հայաստանի Սովետական Հանրապետության Հնությունների պահպանության կոմիտեին¹⁰:
- 41 1921—1985 թթ. Լենինականի, Թիֆլիսի և Երևանի բազմաթիվ եկեղեցիներում խոված քարոզների և քարոզների ծրագրերի սևագրություններ: Ընդամենը 700 էջ ձեռագիր¹¹:
- 42 Մի պատմական էջ Ալեքսանդրապոլի տաճիկներից առաջին գրավման պատմությունից, 1918, 2/15, 38 թերթ ձեռագիր (հրատարակության է պատրաստել Մաշտոցան Մատունադարանի դիվանային բաժնի վարիչ Ավ. Աղամյանը)¹²:
- 43 Ալեքսանդրապոլի եկեղեցիների կառուցման մասին պատմական տեղեկություններ (հրատարակության է պատրաստել Մաշտոցան Մատունադարան Մատունադարա-

⁹ Մաշտոցան Մատունադարանի դիվան, Գարեգին արքային. Հովհանիսցի արյանիվ, թղթ. № 84, վավ. № 3ա:

¹⁰ Մաշտոցան Մատունադարանի դիվան, արյանիվ զանազան թեղինակների, թղթ. № 67, վավ. № 15, I—III, պահպանվում է երեք տարրեր ընդօրինակություններով:

¹¹ Անը, թղթ. 68թ, վավ. № 19—138:

¹² Անը, թղթ. № 62, վավ. № 9:

- նի դիվանային բաժնի վարիչ Ավ. Սմբակյանը¹³:
 44 Ազգաստում Սմբատյանցների, նախանայր Սմբա-
 տից սկսած, Զթ.¹⁴:
- 45 Համառոտ տեղեկագիր Շիրակի հայոց թեմական
 խորհրդի միամյա գործունեության, 1928
 մարտ / 1929 մարտ¹⁵:
- 46 Արտակ եպիսկոպոս Սմբատյանցի թոլքակցությունները և զանազան գործերի սկագրությունները¹⁶: Նա-
 մակներ և ձեռագիր բազմաթիվ այլ գործեր:

*

Արտակ եպիսկոպոս Սմբատյանցի համար
 Էջմիածնի տպարանի պատմության հարցե-
 րով գրադվեր պատահական երևույթ չի ե-
 ղել: Իբրև Մայր Աթոռոի միարան վաճքի
 հովանու ներքո կատարած իր բազմամյա և
 բազմադրյուն գործունեության ընթացքուն
 հաճախ է, որ նրան հանձնարարված է ե-
 ղել գրադվեր նաև տպարանով: Դեռևս
 սարկավագ, 1897—1898 թթ. Խրիմյան Հայ-
 րիկի հրամանով նշանակվել է Մայր Աթոռի
 տպարանական ժողովի անդամ: Ավելի ուշ,
 1903 թ. հովհանն, դարձալ Խրիմյան Հայրի-
 կի կարգադրությամբ նրան է վստահվում
 նաև Մայր Աթոռի տպարանի պատահա-
 նառու անձ լինելու պաշտոնը, որը վարում
 է մինչև 1904 թ. նոյեմբեր ամիսը: Անշուշտ
 Սմբատյանցը շատ ավելի խոր կերպով հա-
 ղորդակից է լինում Մայր Աթոռի տպարանի
 անցյալի և ներկայի վիճակին երբ 1910 թ.
 փետրվարի 1-ին ս. Սինոռի № 250 կար-
 գադրությամբ նշանակվում է տպարանի
 տեսչի կարևոր պաշտոնին, այդ աշխատան-
 քում մնալով մինչև 1911 թ. հովհան ամիսը:
 Այդ ժամանակաշրջանում է, որ նա ըստ իր
 իսկ թողած նշումների 1) ցուցագրել, դա-
 սավորել և տեղավորել է 1771 թ. սկսած
 Մայր Աթոռի տպարանի գրատան բոլոր
 գրքերն ու «Արարատ» ամսագրի տարեկան
 համարները, առանձին նոր դարակների մեջ
 դարսելով: 2) Առանձին մայր մատյանի մեջ
 արձանագրել է տպարանի գույքը, ինչպես
 տպագրված գրքերն ու «Արարատ»-ները,
 նույնպես և մյուս շարժական գույքը՝ մերե-
 նաներ, գործիքներ, տպարանական-կազմա-
 դրական, ձուլարանի վերաբերյալ գործիք-
 ներ, կշռել է հատկապես բոլոր տառերը,
 շպոնները, զարդերը և այլն և արձանագրել
 մայր մատյանում: 3) Ցուցագրել է տպա-
 րանի թղթի պահեստում ունեցած թուղթը և
 կազմարարական այլ նյութեղեններ և արձա-
 նագրել մայր մատյանի մեջ: Այդ մայր մատ-

յանի մի օրինակը ժապավիճած, կնքած ու
 վավերացրած ներկայացրել է ս. Սինոռին,
 մյուսը պահելով տպարանում¹⁷: Իր առօրյա
 գործնական նշանակություն ունեցող հիշյալ
 աշխատանքներից բացի Արտակ եպիսկոպոս
 Սմբատյանցը ձեռնամուխ է եղել պեղելու
 նաև տպարանի անցյալը: Այս առումով ա-
 ռաջին ներթին պետք է նշել նրա իսկ միջո-
 ցով Էջմիածնի 1771 թ. առաջին տպարանի
 հիմնադիր Գեմարձանագրության, ինչպես
 նաև տպարանի մամուլների պտտակների
 հայունաբերումը, որոնք այժմ պահպան են
 Հայաստանի պատմության թանգարանում:
 Էջմիածնի տպարանի պատմությունը գրելու
 գործում անկանական կարևոր նշանակություն է ունեցել 1912 թ. հայ տառերի գյուտի
 1500-ամյա և հայ տպագրության սկզբնա-
 փորման 400-ամյա զոյց փառավոր հորել-
 յանները: Ամենայն հավանականությամբ
 հեղինակը իր աշխատության նախնական օ-
 րինակը արդեն իսկ այս տոնակատարության
 օրերին մեծ մասամբ ավարտած պետք է լի-
 ներ: Դրա օգտին է խոսում այն փաստը, որ
 Մաշտոցյան Մատենադարանի դիվանային
 բաժնի Զանազան հեղինակների փոնտում
 պահվում է Սմբատյանցի այս աշխատության
 նախնական և սկզբից օրինակը, որի վերնա-
 գիրն է: «Ս. Էջմիածնի միարանության գրա-
 կան գործունեությունը և Մայր Աթոռի տպա-
 րանը. 1512, 2որս հարյուրամյակ, 1912, Ար-
 տակ վարդապետ Սմբատյանց, միարան և
 Էջմիածնի»: Այդ ձեռագիրը բաղկացած է
 միայն 111 թերթից¹⁸: Պետք է կարծեն, որ այն
 նախատեսված էր հրատարակել առանձին
 և կամ զոյց հորելյանների առթիվ Էջմիած-
 նի կողմից հրատարակվող «Ծողակաթ» հա-
 յագիտական ժողովածուում: Սակայն այն
 ըստ երևույթին դեռևս անավարտ մնացած
 լինելով հնարավոր չեղավ հրատարակել,
 իսկ հետագայում «Ծողակաթ»-ն էլ չունե-
 ցավ իր հաջորդ հատորները: Համենայն
 դեպք սույն աշխատությունը 1920 թ. արդեն
 հեղինակի կողմից ավարտված էր համար-
 վում, այդ էր պատճառը, որ այն այդ թվա-
 կանին հեղինակի կողմից իբրև ավարտա-
 նառ ներկայացվեց ծայրագույն վարդապե-
 տության աստիճան ստանալու: Նրան ձեռ-
 նադրող Զավեն եպիսկոպոսի կողմից տըր-
 ված վկայագրում ասված է, որ նա այդ աս-
 տիճանին արժանացել է: «Վասն հարուսա-

¹³ Անդ, թղթ. № 62, վավ. № 28:

¹⁴ Անդ, թղթ. № 67, վավ. № 18:

¹⁵ Անդ, թղթ. № 67, վավ. № 16:

¹⁶ Անդ, թղթ. № 67, վավ. № 17:

¹⁷ Մաշտոցյան Մատենադարանի դիվան, Գարեգին արքային հայունական. Հովհանների անձնական արխիվ, թղթ. № 84, վավ. № 8, «Ցուցակ ծառադրության...», էջ 24ա—25ա:

¹⁸ Մաշտոցյան Մատենադարանի դիվան, արխիվ գանազան հեղինակների, թղթ. № 67, վավ. № 14:

ձեռագիր աշխատության արքու վերևսագրով. «Ս. Էջմիածնի միաբանության գրական գործունեությունը և Մայր Աթոռի տպարանը—1512—1920 շորու հայուրամյակ» և վասն բարողական ձրիցն հմտության և Գրոց»¹⁹:

Սակայն հետագայում ևս Արտակ Եպիսկոպոսը շարունակել է աշխատել հնարավնորության չափով նրա ճնարացման վլս: Չքավականապով դրանով նա հիշյալ գործից բացի, իրեւ անմիջական բաղկացուցիչ մաս վերջինին, պատրաստել է Էջմիածնի միաբանների կողմից հրատարակված գործերի գրացուցակ, որը ևս իր հիշյալ ուսումնասիրության նման ապրել է իր ատեղագործական տարրեր շրջանները: Նա ևս պետք է կարծել, որ 1912 թ. դեռևս ամրողացած չինենով պարտութել էր 1920 թ.: Այդ մասին է վկայում Մաշտոցյան Մատենադարանի դիմանային բաժնի Զանազան հեղինակների փողով պահվող հիշյալ գրացուցակի սեվագիր օրինակը բաղկացած 175 թերթից²⁰: Նշենք, որ դեռևս 1917 թ. հունիսի 20-ին թվագրված և այժմ Մատենադարանի դիմանային բաժնի Գարեգին արքեպ. Հովսեփյանցի արխիվում պահվող տպագիր ազդերից երևում է, որ Արտակ Եպիսկոպոսը դիմանով Էջմիածնի միաբան հեղինակներին գրել է, որ իրեն տրամադրել «Եթե հնարավոր է մեկ ամսվա ընթացքում նաև Զեր հեղինակությանց և հոդվածների ցուցակը, նշանակելով տեղը, ժամանակը, թիվը և արժեքը, որպեսզի հնարավորություն ունենամ սոուգելու և լրացնելու իմ աշխատությունս»: Այդ ազդից 37 օրինակ է պահվում հիշյալ արխիվում և որոնցից միայն երեքն են անվանագրված և ուղղված Միհթար Եպիսկոպոսին, Գալուստ Տեր-Մկրտչյանին և Ներսես Եպիսկոպոսին²¹: Հետագայում ևս իր աշխատանքները շարունակելիս, Արտակ Եպիսկոպոսը Գարեգին Եպիսկոպոսի արքի տակած գրած իր անուշականի համակում, որը ըստ Մատենադարանի ցուցակագրողի պետք է որ գրված լիներ 1929 թ. մայիսին, գրել է. «Հ. Գարեգին սրբազն, իմ այն մի աշխատության հետ ծանոթ եք, միա-

բանների գործունեության առթիվ գրած, ուզում եմ գրել Վիեննա, նոցա գրատան ցուցակն ստանամ: Արդյոք ո՞ւմ դիմեմ, խնդրում եմ անոն և հասցեն գրեք»²²: Վերջապես 1934 թ., երբ ամբողջ աշխարհի հայությունը նախապատրաստվում էր տոնելու Աստվածաշնչի հայերեն թարգմանության 1500-ամյակը, այդ ժամանակ արդեն Արտակ Եպիսկոպոսի Միհթայանցի տպագրության համար պատրաստել էր ինչպես իր ուսումնասիրությունը, այնպես էլ Վերջինին բաղկացուցիչ մասը կազմող Գրացուցակը, դրանք ձոնելով այդ մեծ հորեցյանին:

Դնչո՞ւմն է կայանում Մեսարոպ Եպիսկոպոսի ներկայումս հրատարակված աշխատության արժեքը: Սույն աշխատությունը գրվելոց առաջ, այնպիսի անվանի հայագետներ, ինչպիսիք են Հ. Գ. Զարբիանցներ, Ալ. Երիցյանը, Հ. Ա. Ղազիկյանը, Լեռն, Գյուտ ապ. քահանա Աղանձնացը, Թեղիկիը, Գ. Լևոնյանը և որիշներ, այս կամ այն չափով թեև անդրադարձել են Էջմիածնի տպարանի պատմությանը և իրենց արժեքավոր լուման են մուծել հայ տպագրության ընդհանուր պատմության ստեղծման գործում, սկզբան ըրանցից և ոչ մենք ձեռնամուխ չի եղել որվագելու մայր հողի վրա ստեղծված առաջին տպարանի հանգամանից պատմությունը: Այդ տեսակետից Արտակ Եպիսկոպոսի սույն գործը առաջինն էր, որ ամրողական կերպով շարադրվում էր Էջմիածնի տպարանի պատմությունը: Նա ընդգրկում է Մայր Աթոռի տպարանի հիմնադրումից ել առաջ, արտասահմանում Էջմիածնի անոնով գործող աստանական տպարաններից մինչև Էջմիածնի տպարան ստեղծումը (1771 թ.) և վերջինին 150-ամյա բովանդակ պատմության ընդարձակ ժամանակաշրջանը:

Սշխատության հաջողությանը մեծ չափով նպաստել է հեղինակի ցուցարերած այն բացառիկ բարեխնդությունը դեպի իրեն այն ժամանակ մատչելի եղող Էջմիածնական հրատարակություններն ու նրանցում գրտնվող հիշատակարանները: Նրա աշքից չեն վրիպել նաև իրեն նախորդող հայագետների գրած և հիշյալ թեմայի հետ առնչվող մենագրություններն ու մամուլում ցրված հոդվագիրները:

Սշխատության ամենամեծ արժանիքներից է հատկապես Էջմիածնի տպարանի պատմության հետ անմիջականորեն կապված և այդ պատմության ամրողացմանը նպաստող արխիվային անտիկ նյութերի օգտա-

¹⁹ Մաշտոցյան Մատենադարանի դիման, Գարեգին արքեպիսկոպոսի կողմէ Հովսեփյանցի արխիվ, թղթ. № 94, վավ. № 8, էջ 8, փաստ. 6:

²⁰ Մաշտոցյան Մատենադարանի դիման, արխիվ զանազան հեղինակների, թղթ. № 87, վավ. № 19 (պակասագրով):

²¹ Մաշտոցյան Մատենադարանի դիման, Գարեգին արքեպիսկոպոսի կողմէ Հովսեփյանցի արխիվ, թղթ. № 84, վավ. № 4:

²² Անդ, թղթ. № 96, վավ. № 1200:

գործումը: Այս առումով միանգահայտ արժեքավոր են Գեորգ Դ-ի և Խրիմյան Հայրիկի գրագրություններից մեջ բերված այն հասկածները, որոնք նոր լույս են սփռում ՀՀ-ի մասնակի տպարանի ցարդ մեծ մասամբ անհայտ մնացած ներքին և արտաքին հարաբերություններին վերաբերող մի շարք հարցերի վրա:

Իրեն Մայր Աթոռոյի տպարանի հետ անմիշականորեն շիման մեջ եղող անձնավորություն, Արտակ Եպիսկոպոսը Սմբատյանը սույն աշխատությունը գրելիս ունեցել է նաև ամ բացադրի առավելությունը, որ նա ոչ միայն բացաձանոր է եղել ՀՀ-ի մասնակի տպարանի պատմությանը, այլև իրեն տպարանական գործի լավատեղյակ անձնավորություն, հնարավորություն է ունեցել անդրադառնաւոր նաև տպարանական գործի հետ կապված մանրամասներին: Սույն աշխատությունում արժեքավոր է նաև ՀՀ-ի մասնակի տպարանի վերջին շրջանի գործունեությանը վերաբերող հատվածը, որ հեղինակը անդրադառնում է ինչպես տպարանի սարքավորմանը, այնպես էլ նոր տեսչի (Երվանդ Վարդապետ Տեր-Մինասյան) և տպագրող ու գրաշար վարպետների նուանդուն գործունեությանը:

Ինչպես նշվեց, հեղինակը շրջանական միայն իր սույն ուսումնասիրությամբ, միանգամայն իրեն լրացում իր գործի իմաստությունը անձնագույն տպարանների-հրատարակությունների մատենագիտությունը: Ավելին, հաջոահարելով բազմաթիվ դժվարություններ հեղինակը ձեռնարկել է նաև ՀՀ-ի բոլոր միարանների հեղինակությունների լիակատար մատենագիտություն կազմելու տաղումայի ու մաշնոն, սակայն շնորհակալ գործին:

Սույն գործի հրատարակության համար հիմք է նեղունվել Արտակ Եպիսկոպոսը Սմբատյանի կողմից վերջնական կերպով ավարտված հրատարակ բնագիրը: Այն պահպում է Մայրաքանչ Մատենադարանի դիվանային բաժնի Գարեգին արքեպիսկոպոսի 1ա: Նա բաղկացած է 178 մեծադիր ձեռագիր էջերից և ունի հետևյալ բաժինները. ա) Հառաջարան, բ) Աղբյուրներ, գ) Ներածություն (Ա—ԾԳ մաս կամ գլուխ): Բնագիրը տպագրության պատրաստելու ընթացքում հեղինակի կողմից սկզբանադրյությունը և գրականությունը մեջ բերված պարբերությունները մեկ առ մեկ համեմատվել և ճշտվել են իրենց բուն սկզբանադրյությունների և գրականության հետ, ուղղվել են նկատվող վրհպումները և լրացվել նշմար-

վող բաց թողումները: Հեղինակի կողմից օգտագործված, սակայն չնշված մի շարք աղբյուրներ և գրքերի անուններ վերականգնվել են ծանոթագրությունների բաժնում: Հեղինակի կողմից իր ժամանակին օգտագործված արխիվային հյութերի մեծ մասը երկար որոնումներից հետո հնարավոր է եղել գտնել և համեմատել Հայատանի կենտրոնական պատմական արխիվում և ՀՀ-ի մասնակի Մայր Աթոռի ձեռագրատանը և դարձյալ ծանոթագրությունների միջոցով ցոյց են տրվել պահպող արխիվի անունը, վավերագրի կամ ձեռագրի համարը և էջը: Հեղինակը իր գործի տպագրության համար հահատեսած է եղել մի շարք լուսանկարներ, դժբախտաբար այդպիսիք հնարավոր չեղավ գտնել Մայրաքանչ Մատենադարանի դիվանում, ուստի հրատարակիչները, ենենով հեղինակի ցանկությունները, ավելացրել են համապատասխան նկարներ հայ տպագրության վերաբերյալ:

Մայր Աթոռոյի տպարանի պատմության ամբողջամանը հպատակություն ցանկությամբ անհրաժեշտություն է գգացվել սույն աշխատության վերջին կետու հավելվածական նյութերի բաժնն: Հավելվածում բերված հյութնը վերաբերում են ՀՀ-ի մասնակի տպարանի հիմք և նոր պատմության մի շարք կարևոր հարցերին: Ուշագրավ են Փարիզի Նուովարյան մատենադարանի կողմից ուղարկված և 1772 թ. թղթի գործարանի համար վարպետները գտնելու մասին գրված փաստաթղթի թարգմանությունը, Մայրաքանչ Մատենադարանի դիվանային բաժնի համարին վարիչ, Հայրենական մեծ պատերազմում զինված Հարություն Արքահամբանի (1907—1943) ՀՀ-ի թղթի գործարանի մասին հրատարակած արժեքավոր հոդվածը, Մատենադարանի ձեռագրական բաժնում պահպող Վ. վրդ. Բանասեանցի թղթած անիպ հուշերը ՀՀ-ի մասնակի վերաբերյալ, Մուսկայի պետական պատմական արխիվում պահպող և ՀՀ-ի մասնակի հրատարակություններին վերաբերու փաստաթղթը, Խրիմյան Հայրիկի կողմից տպարանի մասին գրված մի շարք գրությունները, Գարեգին Եպիսկոպոսի գրած հոդվածը տպարանի նոր շրջանակի մասին և այլն:

Արտակ Եպիսկոպոսը Հայրաքանչի միարանության գրական-կրթական գործունեությունը և Մայր Աթոռոյի տպարանը» արժեքավոր գործը մեծ չափով կնպաստի Մայր Աթոռի տպարանի, երա միարանության կողմից հապագիտության մատուցված երախտիքը ճանաչելի դարձնելուն և դրա հետ միասին նաև հայ տպագրի գրքի և հայ մշակույթի պատմությունը ամբողջացնելու շնորհակալ գործին: